

ԿՈՄԻՏԱՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏՈՒՄՆԵՐ

Կոմիտաս վարդապետի երևանյան դիվանի նյութերի հետազոտությունը ավելի ու ավելի է բերում այն համոզման, որ մեծ արվեստագետն ու մտածողը իր ազգագրական, գիտական ու ստեղծագործական կարևորագույն աշխատանքներն սկսել է Գևորգյան ճեմարանում սովորելու տարիներին (1880-ական թվականների երկրորդ կեսին) և չուզահեռաբար առաջ է տարել դրանք մինչև գիտակցական կյանքի վերջը: Այդ աշխատանքներն են՝ հայ գեղջուկ երգերի հավաքումը, դրանց կազմության քննությունն ու ներդաշնակության սկզբունքների մշակումը, խաղաբանական արդյունավետ որոնումները և հոգևոր անտիպ մեղեդիների (այդ թվում և արդեն հայտնի միավորների հետաքրքիր տարբերակների) գրառումն ու բավաճայման նոր հնարավորությունների կոնադատումը:

Ասվածը վերաբերում է նաև, մասնավորապես, Պատարագի երգեցողություններին և առհասարակ նրա երաժշտական ողջ բաղադրիչի նորոգման-ներդաշնակման հետ կապված աշխատանքներին:

Պարզվում է, որ Կոմիտաս վարդապետը շատ վաղ է սկսած եղել Պատարագի՝ այն ժամանակ կենցաղավարած մեղեդիների նկատմամբ սեփական վերաբերմունք մշակելու, ինչպես և դրանց տարբեր երգվածքները հավաքելու, գրանցելու, համեմատելու, ընտրելու և հարդարելու գործը:

Դա վկայող նյութերից է, մասնավորապես, Կոմիտաս վարդապետի 1892 թ. հոգևոր երգերի անտիպ ժողովածուն¹: Այն կազմված է վարդապետի ծննդավայրում՝ Կուտինայում (Քեղթահիա), 1892 թ. օգոստոսին, ուր նա՝ դեռևս Գևորգյան ճեմարանի նախավեր-

ջին լսարանի ուսանող, էջմիածնից հատուկ թույլտվությամբ եկել էր հանգստանալու և ապաքինվելու:

Նրանում ամփոփված նյութերը՝ մեներգեր, միաձայն խմբերգեր, քարոզներ և այլն, Պատարագից են: Դրանք ամբողջապես գտնվում են Կոմիտասյան այն որոնումների շրջանակներում, որոնք ի վերջո վարդապետին պիտի հանգեցնեին՝ Ն. Թաշճյանի ձայնագրած Պատարագի մեղեդիների ռճական առանձնահատկություններն իրենց նշանակությամբ համահայկական համարելու մղտքին²:

Այս, ինչպես և դիտարկվող ժողովածուի մասնավոր ուսումնասիրության հետ կապված այլ հարցերին մենք կանդրադառնանք մոտիկ ապագայում:

Իսկ այժմ նշենք, որ Պատարագի մեղե-

² Բավական է հիշեցնել, որ դեռևս անցած հարյուրամյակի վերջին քառորդում էջմիածնում ընդունելություն էին գտել Ն. Թաշճյանի ձայնագրած Պատարագի երգերը, որոնք երկու հրատարակություն էին ունեցել (հայկական ձայնանիշերով, 1874 և 1878 թվականներին): 1890-ական թվականների սկզբներից, երբ Կոմիտասը ձեռնարկում էր նաև Պատարագի մեղեդիների այլ երգվածքների գրառումն ու համեմատությունը, Մ. Եկմայանը, որ իր «Պատարագի» եռաձայն ներդաշնակությունը ավարտել էր արդեն և անցել քառաձայնի հետ կապված աշխատանքներին, մայր եղանակները քաղում էր գլխավորապես Ն. Թաշճյանի ձայնագրություններից: Կոմիտասը, ավելի ուշ, 1898 թվականին «Արարատի» էջերում հրապարակած Եկմայանի «Պատարագին» նվիրված իր գրախոսականում, դրվատանքով էր նշում այդ հանգամանքը, ու ինքը ևս զգալի չափով օգտվում նույն աղբյուրից:

¹ ՉԱԳԱԹ, Կոմիտասի դիվան, ծրար. № 337:

դիներով Կոմիտասը պահպնել է նաև հոգևոր երգերի 1893 թ. ժողովածուն կապմելիս³:

Նույն տարվա աշնանից, երբ, Գևորգյան ձեմարանը ավարտելուց հետո, այստեղ, Քր. Կարա-Մուրզայի փոխարեն երաժշտության դասատու և դպրապետ-խմբավար է նշանակվում Կոմիտասը, նա կանոնավոր կերպով, թեև ոչ առանց ընդմիջումների, աշխատում է ընտրություն կատարել Պատարագի իրեն ծանոթ մեղեդիների մեջ, կանոնավորել, ապա և ներդաշնակել դրանք:

Այդ աշխատանքը նա խորացնում է Բեռլինում սովորելու տարիներին ևս (1896—1899)⁴:

Վերադառնալով Էջմիածին, Կոմիտասը կրկին ստանձնում է ձեմարանի երաժշտության դասատուի և դպրապետ-խմբավարի պաշտոնները: Քառաձայն խումբ է կազմում և ջանքերն ուղղում է արդեն ի՛ր «Պատարագի», նրա երաժշտական բաղադրիչի ի՛ր սեփական, աստիճանաբար հստակվող մտահղացման մարմնավորմանը:

Տարիների ընթացքում խմբերգային մշակման ու նաև կատարման առումներով այն բարձրացնելով մասնագիտական զանկալի մակարդակի, Կոմիտասը Էջմիածնի Մայր տաճարում, 1908 թ. հնչեցնում է մեծ նուալի բազմաձայն ստեղծագործությունը (Մատթեոս Իսկրիյանի կաթողիկոս ընտրվելու առթիվ):

Այնուհետև, Կ. Պոստոլ. դառնալ լադերով բոլոր ճիգերը, 1912 թ. ձեռնամուխ է լինում ներդաշնակված «Պատարագի» վերջնական հղկմանը, ճշտվածո և նոոիզ ու նորից խմբագրվածո հետլիետե սովորեցնելով երգեցիկ հմուտին:

1913-ին, Ղաասաիկ II Փոխե եկեղեցում, Կոմիտասի ղեկավարությամբ հնչում է նրա

«Պատարագը»՝ նոր, ավելի ևս կատարյալ խմբագրությամբ:

Եվ սակայն, դրանով էլ դեռևս չբավարարվելով, աքսորից վերադարձին որոնող արվեստագետը մեկ անգամ ևս վերանայում է աշխատության բազմաթիվ ձեռագրերը, նոր ճշգրտումներ է անում և սկսում մաքրագրել ամբողջը:

Գործն ընդհատվում է ճակատագրական հիվանդության սաստկացմամբ: Մխիթարականն այն է միայն, որ Կոմիտասի երևանյան դիվանում կենտրոնացված նրա ձեռագրերը հնարավորություն են տալիս իրագործելու հանձարեղ վարդապետի «Պատարագի» նոր, ավելի ամբողջացված ու համեմատված-ճրգրտված հրատարակությունը, քան այն, ինչ արված է շուրջ կես դար առաջ⁵:

Անկախ դրանից, նախընթացից պարզ հետևում է, որ հայոց Պատարագի երաժշտական բաղադրիչը Կոմիտասի մտահոգությունների առարկան է եղել 1892 թվականից: Բայց եթե հաշվի առնենք, որ Կուտինայում տեղի հոգևոր երգերը հավաքելու միտքն իսկ ծագած պետք է լիներ հայ եկեղեցական երաժշտության մասին ավելի ևս վաղ ժամանակների վերաբերող մտորումների և նույնիսկ կատարված որոշակի աշխատանքի հիման վրա⁶, պետք է ելրակացնենք հետևյալը. «Պատարագին» Կոմիտասը նվիրել է իր գիտակցական գրեթե ողջ կյանքը, գործն սկսելով կենդանավարած միաձայն երգեցողությունների ուսումնասիրությունից և նոր, անտիպ մեղեդիների գրառումից:

Ստորև առաջ ենք բերում մի էջ Կոմիտաս վաղապետի 1892 թ. հոգևոր (Պատարագի) երգերի ժողովածուի և մի քանի նմուշ նրա նվազ հայտնի նկարներից⁷:

³ Տես մեր հրապարակումը՝ Կոմիտասի 1893 թ. հոգևոր երգերի ժողովածուն, «Կոմիտասական», հտ. 2, Երևան, 1981, էջ 83—116: Ավելի առաջ, ժողովածուիս նյութերը եվրոպական ձայնանիշերի փոխադրելով, կարճամիտի բացատրություններով մաս առ մաս հրապարակել էինք «Էջմիածին»-ի էջերում: Տե՛ս ամսագրի 1969, № 12 և 1970, № № 2, 4 ու 6—7-ը:

⁴ 1898 թ. «Արարատի» 111—117 էջերում լույս տեսած Կոմիտասի գրախոսականը Մակար Եկմայանի «Պատարագի» հրատարակության առթիվ ցույց է տալիս, որ դեռևս այն ժամանակ, Բեռլինում երաժշտական բարձրագույն կրթություն ստացող գրախոսն ունեցել է իր «Պատարագի» մտապատկերը:


⁵ Նկատի ունենալով փարիսյան հրատարակությունը՝ Կոմիտաս վարդապետ, Դաշնադրեալ երգեցողությունը Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, վասն միասեռ արական խմբի (վերատեսեալ ի ձեռն Վարդան Սարգսեանի), Փարիզ, 1933:

⁶ Իսկ որ այդպիսին եղել է՝ ապացուցվում է Հրեշտակապետաց կանոնի օրինության կոմիտասյան 1887 թ. ձայնագրությամբ, որը նույնպես հրատարակել ենք ժամանակին: Տե՛ս «Էջմիածին», 1969, № 12, էջ 58:


⁷ Բոլորն էլ Ե. Չարեկցի անվան Գրականության և արվեստի թանգարանում պահվող Կոմիտասի դիվանից:



Կոմիտաս Գարգապեան



Օշականի վանքի այգում, 17 սնպտեմբերի 1909 թ., ձախից երկրորդը՝ Կոմիտաս վարդապետը
(ստամ), աջից առաջինը՝ Գ. Լևոնյանը (կանգնած)



Կոմիտաս վարդապետը (մեջտեղում) Երզնայիմբի հետ. Ալեքսանդրիա, 1911 թ.

